Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ՇՀԾԶԲ-15/1-16-06» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(համացանցի /ինտերնետային կապի տրամադրում/ ձեռքբերման)

ք. Երևան 22 մարտի 2016թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Սիմոնյան

քարտուղար՝ Մ.Գրիգորյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Մելիքսեթյան, Կ.Դանիելյան, Է.Մովսիսյան

1. ՇՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. համացանցի /ինտերնետային կապի տրամադրում/ ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 հասցեում, 2016 թվականի մարտի 22-ին՝ ժամը 10:30-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. <www.armeps.am> կայքի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Յուքոմ» ՍՊԸ	ք. Երևան, Սայաթ Նովա 40/1 30, հեռ. /060/444444

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Միակ մասնակից «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտը կազմվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Հ/հ չափաբաժ.	Ապրանքի անվանումը	Բյուջեով նախատեսված գինը	Մասնակիցների առաջարկած գները՝ ՀՀ դրամ	
			«Յուքոմ» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ
1	համացանց/ինտերնետային կապի տրամադրում/	4 500 000	1 400 000	1 680 000

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

5. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

5.1 Հիմք ընդունելով միակ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը՝ հանձնաժողովը որոշեց՝

ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել միակ հայտ ներկայացրած **«Յուքոմ» ՍՊԸ-ին:**

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստին ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև կպահանջվի ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու վերաբերյալ, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ

զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրկացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

6.Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

6.1 Սույն թվականի մարտի 14-ին «Արմենտել» ՓԲԸ -ի կողմից armeps.am համակարգի միջոցով ստացվել է հարցում՝ ըստ որի՝

Հարցադրում 1: Հարգելի գործընկեր խնդրում ենք պատասխանել, որ հասցեներում պետք է կապը տրամադրվի:

Պարզաբանում: Հարգելի մասնակից ի պատասխան Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ հասցեներն այս պահի դրությամբ հետևյալն են՝

ք. Երևան, Մ.Մկրտչյան 5; ք.Երևան, Կոմիտաս 49/2; ք.Երևան, Բաղրամյան 68 բն 6; ք.Երևան, Լեփսիուսի 37 բն. 4; ք.Երևան, Քաջազնունի 6 բն. 33, որոնք կարող են փոփոխվել կապված պաշտոնատար անձանց փոփոխության հետ, որն այս պահի դրությամբ հայտնի չեն:

Հարցադրում 2: Հարգելի գործընկեր խնդրում ենք պատասխանել, 10ՄԲ/վ ինտերնետ կապ է, թե տվյալների փոխանակում:

Պարզաբանում: Հարգելի մասնակից ի պատասխան Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ ինտերնետ կապ է հիմնականում, բայց կարիքի /անհրաժեշտության/ դեպքում կարող է փոխանակվել տվյալների փոխանցմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

7. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>**

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 5-րդ կետի 5.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Սիմոնյան

քարտուղար՝ _____ Մ.Գրիգորյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Մելիքսեթյան

_____ Կ.Դանիելյան

_____ Է.Մովսիսյան